ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N1733 - Ա **30 մարտի 2009թ.**

ՖԱՆԱՐՋՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ. 44 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԻՐԱԲ ՄՆԱՑԱԿԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ, ԱՐԾՐՈՒՆԻ ՎԱԼՏԵՐԻ ՎԻՐԱԲՅԱՆԻ, ԼՈՒՍԻՆԵ ՎԱԼՏԵՐԻ ՎԻՐԱԲՅԱՆԻ,ԼԱՈՒՐԱ ԱՐՏԱՇԵՍԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Վիրաբ Մնացականի Հարությունյանի (ծնված 24.10.1949թ.), Արծրունի Վալտերի Վիրաբյանի (ծնված 08.04.1964թ.), Լուսինե Վալտերի Վիրաբյանի (ծնված 20.09.1974թ.), Լաուրա Արտաշեսի Ավետիսյանի (ծնված 06.07.1940թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Ֆանարջյան փողոցի հ.44 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 1600քմ, որից 1558քմ մակերեսով հողամասը Վիրաբ Մնացականի Հարությունյանին, Արծրունի Վալտերի Վիրաբյանին, Լուսինե Վալտերի Վիրաբյանին, Լաուրա Արտաշեսի Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 42քմ մակերեսով հողամասն օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1993 թվականը, Երևանի քաղաքապետարանի «Հողի և ունեցվածքի գործառնություններ» ՊՓԲԸ-ի 10.03.2009թ. հ.20/2-Ե-98 գրությունը, 05.12.2008թ. ժառանգության իրավունքի վկայագրերը, Երևանի քաղաքապետարանի «Քաղաքաշինություն» ՊՓԲԸ-ի 25.02.2009թ. հ.20-Ել-1331 եզրակացությունը, համաձայն որի Ֆանարջյան փողոցի հ.44 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով «Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Ֆանարջյան փողոցի հ.44 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Վիրաբ Մնացականի Հարությունյանի, Արծրունի Վալտերի Վիրաբյանի, Լուսինե Վալտերի Վիրաբյանի, Լաուրա Արտաշեսի Ավետիսյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 1558քմ մակերեսով հողամասին կից 42քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 42քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Զեյթուն տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով:

4. Ֆանարջյան փողոցի հ.44 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ «Ֆանարջյան փողոցի հ. 44 տուն»:

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Զեյթուն տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Վիրաբ Մնացականի Հարությունյանի, Արծրունի Վալտերի Վիրաբյանի, Լուսինե Վալտերի Վիրաբյանի, Լաուրա Արտաշեսի Ավետիսյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները:

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Քանաքեռ-Զեյթուն թաղապետարան:

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ